Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2025 «Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում գինեկոլոգիական բժշկական սարքավորումների բարելավման ծրագրի ավարտական արարողություն»

Երևան՝ 9 Փետրվարի, 2026թ.

Փետրվարի 9-ին, «Էրեբունի» բժշկական կենտրոնում տեղի ունեցավ «Երևանի «Էրեբունի» ԲԿ գինեկոլոգիական բժշկական սարքավորումների բարելավման» դրամաշնորհային աջակցության ծրագրի (մինչև 68,003 ԱՄՆ դոլար) ավարտական արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական և «Էրեբունի» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն դոկտոր Միքայել Մանուկյանը, ինչպես նաև կենտրոնի բժշկական անձնակազմը:

Այս ծրագիրը նպատակ ունի բարելավել կենտրոնի գինեկոլոգիական ուռուցքների ախտորոշման և բուժման հնարավորությունները՝ տրամադրելով մեկ նոր ճապոնական OLYMPUS գինեկոլոգիական ախտորոշիչ և վիրահատական սարք: Արդյունքում, տարեկան մոտ 2400 հիվանդ (ներառյալ Լեռնային Ղարաբաղից տեղահանված մոտ 2000 անձինք) անվճար կօգտվեն գինեկոլոգիական ուռուցքների ախտորոշման և վիրահատման առաջադեմ ծառայություններից: ԲԿ-ի նախկին գինեկոլոգիական ախտորոշիչ սարքերը ձեռք են բերվել երկրորդական կարգով և օգտագործվել են ավելի քան 15 տարի: Այժմ հաճախակի խափանումները խոչընդոտում են բժշկական ծառայությունների մատուցմանը: Հետևաբար, այս ծրագիրը լուծում է նոր սարքավորումների անհրաժեշտության խնդիրը:

«Էրեբունի» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն, բժիշկ Մանուկյանը, իր երախտագիտությունը հայտնեց՝ նշելով. «Այս գերազանց ճապոնական սարքավորումները մեզ հնարավորություն կտան փրկել բազմաթիվ հիվանդների՝ հասկանալով ուռուցքների վիճակը և իրականացնելով կանխարգելիչ վիրահատություններ: Ճապոնացի ժողովրդի բարի կամքը մեր սրտերում պահելով՝ մենք կշարունակենք ներդրումներ անել գինեկոլոգիական առողջապահության ոլորտում»: Դեսպան Առկին նույնպես շնորհավորական խոսք ասաց՝ ասելով. «Հուսով եմ, որ այս ծրագրի շրջանակներում տրամադրված սարքավորումները կօգնեն ախտորոշել, ժամանակին բուժել և նվազեցնել ուռուցքներից տառապող կանանց թիվը, և որ դրանք լայնորեն կճանաչվեն որպես Ճապոնիայի և Հայաստանի միջև բժշկական համագործակցության խորհրդանիշ»:



Դեսպան Աոկին շնորհավորանքի ելույթ ուղղելիս

Բժիշկ Մանուկյանը երախտիքի խոսքեր ուղղեց Ճապոնացի գործընկերներին

Դեսպան Աոկին տեղեկացավ տրամադրված սարքավորումների գործառույթների հետ :

Այս ծրագրի շրջանակներում տրամադրվել են ուռուցքների ախտորոշման և վիրահատման սարքավորումներ